ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՍԱՐՔԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՊՎԾ-ՄԱԾՁԲ-23/08

ք. Երևան «04» Մայիս 2023թ.

Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Անի Բաղդասարյանի, որը գործում է Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության (այսուհետ՝ ծառայություն) կանոնադրության հիման վրա, այսուհետ «Պատվիրատու» մի կողմից, և Ա/Ձ «Մանվել Ջալավյան»-ը, այսուհետ «Կատարող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում **է 600000 (վեց հարյուր հազար) ՀՀ դրամ:**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են ատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն այմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են համավարակը, երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց արտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ,

որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայություն ք. Երևան, Մաշտոցի 47 Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառնական վարչություն Հ/Հ 900011021954 ՀՎՀՀ 00183253	Ա/Ձ «Մանվել Ջալավյան» Ք. Երևան, Նոր Նորք Գալշոյան փ. 19 շ. բն. 12 «Ինեկոբանկ» ՓԲԸ Հ/Հ 2050032155921001 ՀՎՀՀ 82934656
Գլխավոր քարտուղար՝ ---------- Ա. Բաղդասարյան /ստորագրություն/ Կ.Տ	Տնօրեն՝ ---------- Մ. Ջալավյան /ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 1
«4» մարտի 2023 թ. կնքված
«ՊԿԾ-ՄԱԾՁԲ-23/08» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/Բ	ԳՄԱ կոդ	Մատուցվող ծառայության անվանումը	Չափման միավորը	Քանակը	Ընդհանուր գումարը (ՀՀ դրամով)	Ժամկետը
1	50311120/1	Համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ	դրամ	1	600000	Մարտ-դեկտեմբեր 2023թ.

ՀՀ	1. Սարքերի և սարքավորումների սպասարկման ծառայությունների անվանումները և բնութագրերը	Միավոր ծառայության գինը
1	Սեղանի համակարգչի պրոֆիլակտիկա	1000
2	Սեղանի համակարգչի MB նորոգում	3500
3	Սեղանի համակարգչի MB տեղադրում՝ ներառյալ Գեգաբայթ H 310M H կամ համարժեք	30000
4	Դյուրակիր համակարգչի MB նորոգում	7000
5	Դյուրակիր համակարգչի MB տեղադրում ներառյալ համապատասխան MB	58000
6	CPU տեղադրում՝ ներառյալ Քորե 2 Դուո Ե7300 (2.66 ԳՀg), 1066 ՄՀg (Core 2 Duo E7300 (2.66G Hz), 1066 MHz)	5000
7	CPU տեղադրում՝ ներառյալ G3250 (3.20GHz), G3220 (3.00GHz)	14000
8	CPU տեղադրում՝ ներառյալ G640 (2.80GHz)	13000
9	CPU տեղադրում՝ ներառյալ I3-8100 (3.60GHz)	40000
10	Սեղանի համակարգչի RAM տեղադրում՝ ներառյալ ԴԴՌ2 1024Մ 667/800ՄՀՑ (DDR2 1024M 667/800MHZ)	3000
11	Սեղանի համակարգչի RAM տեղադրում՝ ներառյալ ԴԴՌ3 1024Մ 1333ՄՀՑ (DDR3 1024M 1333MHZ)	4000
12	Սեղանի համակարգչի RAM տեղադրում՝ ներառյալ ԴԴՌ3 2048Մ 1333ՄՀՑ (DDR3 2048M 1333MHZ)	6000
13	Սեղանի համակարգչի RAM տեղադրում՝ ներառյալ ԴԴՌ3 4ԳԲ 1333ՄՀՑ (DDR3 4ԳԲ 1333MHZ)	13000
14	Սեղանի համակարգչի RAM տեղադրում՝ ներառյալ ԴԴՌ4 4ԳԲ 2400ՄՀՑ(DDR4 4ԳԲ 2400MHZ)	12000
15	Սեղանի համակարգչի SVGA տեղադրում՝ ներառյալ Նվիդիա ՋիՖ ՋիՏի 1 Գբ ՊիՍիԱյ-Էքսպ (Nvidia GF GT 1Gb PCI Exp)	30000
16	Դյուրակիր համակարգչի RAM տեղադրում՝ ներառյալ ԴԴՌ3 2048Մ 1333ՄՀՑ(DDR3 2048M 1333MHZ)	4500
17	Դյուրակիր համակարգչի RAM տեղադրում՝ ներառյալ ԴԴՌ3 4ԳԲ 1333ՄՀՑ (DDR3 4ԳԲ 1333MHZ)	8500
18	Սեղանի համակարգչի SDD տեղադրում, ներառյալ ՀԴ 240 գբ ՍԱՏԱ, (SDD 240 Gb SATA)	21000
19	Սեղանի համակարգչի SDD տեղադրում, ներառյալ ՀԴ 256 գբ ՍԱՏԱ, (SDD 256 Gb SATA)	21000
20	Սեղանի համակարգչի SDD տեղադրում, ներառյալ ՀԴ 512 գբ ՍԱՏԱ, (SDD 512 Gb SATA)	35000
21	Սեղանի համակարգչի HDD տեղադրում, ներառյալ ՀԴ 1 տբ ՍԱՏԱ, 7200 ռպմ (HDD 1TB SATA, 7200 rpm)	22000
22	Նոթբուկ համակարգչի HDD տեղադրում՝ ներառյալ ՀԴ 512 գբ ՍԱՏԱ, 5400 ռպմ (HDD 512 Gb SATA, 5400 rpm)	18000
23	Նոթբուկ համակարգչի SDD տեղադրում՝ ներառյալ ՀԴ 256 գբ ՍԱՏԱ, (SDD 256 Gb SATA)	21000
24	Նոթբուկ համակարգչի SDD տեղադրում՝ ներառյալ ՀԴ 512 գբ ՍԱՏԱ, (SDD 512 Gb SATA)	35000
25	Դյուրակիր համակարգչի սնուցման աղբյուրի վերանորոգում	5000
26	Դյուրակիր համակարգչի էկրանի փոխարինում՝ ներառյալ Lenovo IPL3	35000
27	Դյուրակիր համակարգչի էկրանի փոխարինում՝ ներառյալ Acer A315	35000
28	Դյուրակիր համակարգչի էկրանի փոխարինում՝ ներառյալ Lenovo IdeaPad	35000
29	Դյուրակիր համակարգչի սնուցման մարտկոցի նորոգում՝ ներառյալ Lenovo IPL3	5000
30	Դյուրակիր համակարգչի սնուցման մարտկոցի նորոգում՝ ներառյալ Acer A315	5000
31	Դյուրակիր համակարգչի սնուցման մարտկոցի նորոգում՝ ներառյալ Lenovo IdeaPad 330	5000
32	Դյուրակիր համակարգչի սնուցման մարտկոցի փոխարինում՝ ներառյալ Lenovo IPL3	25000
33	Դյուրակիր համակարգչի սնուցման մարտկոցի փոխարինում՝ ներառյալ Acer A315	25000
34	Դյուրակիր համակարգչի սնուցման մարտկոցի փոխարինում՝ ներառյալ Lenovo IdeaPad 330 կամ համարժեք	26500
35	Դյուրակիր համակարգչի ստեղնաշարի փոխարինում՝ ներառյալ Lenovo IPL3	22000
36	Դյուրակիր համակարգչի ստեղնաշարի փոխարինում՝ ներառյալ Acer A315	22000
37	Դյուրակիր համակարգչի ստեղնաշարի փոխարինում՝ ներառյալ Lenovo IdeaPad 330	25000
38	SD քարտի տեղադրում՝ ներառյալ քարտը 256 ԳԲ (256 GB)	21000

39	SD քարտի տեղադրում՝ ներառյալ քարտը 512 ԳԲ (512 GB)	37000
40	DVD-RW փոխարինում՝ ներառյալ ԴՎԴ-ՌՎ (DVD-RW)	7300
41	Սնուցման բլոկի տեղադրում՝ ներառյալ սնուցման բլոկը Պ4 պահարանի համար 450 Վտ (Power supply unit for P4 Case 450w)	7500
42	Սնուցման բլոկի տեղադրում՝ ներառյալ սնուցման բլոկը Պ4 պահարանի համար 650 Վտ (Power supply unit for P4 Case 650w)	8500
	2. Մոնիտորի պահպահման և վերանորոգման տեխնիկական բնութագիր	
1	ԼՍԴ-ի լամպի փոխարինում՝ ներառյալ լամպը 17", 19, 21.5, 23,8	4000
2	ԼՍԴ-ի մոնիտորի լուսավորման համակարգի վերանորոգում՝ ներառյալ համապատասխան պահեստամասերը 17"	6000
3	ԼՍԴ-ի մոնիտորի լուսավորման համակարգի վերանորոգում՝ ներառյալ համապատասխան պահեստամասերը 19"	8000
	3. Անխափան սնուցող սարքի պահպահման և վերանորոգման տեխնիկական բնութագիր	
1	Մարտկոցի փոխարինում՝ ներառյալ մարտկոցը 12Վ/7Ա	9000
2	Մարտկոցի փոխարինում՝ ներառյալ մարտկոցը 12Վ/9Ա	13000
3	Մարտկոցի փոխարինում՝ ներառյալ մարտկոցը 12Վ/17Ա	28000
4	Ռելեների փոխարինում՝ ներառյալ ռելեները	4000
	4. Սկաների պահպահման վերանորոգման տեխնիկական բնութագիր	
1	Սկաների պրոֆիլակտիկա	1000
2	Վերանորոգում պահեստամասերով	5000
3	Լամպի փոխարինում՝ ներառյալ լամպը Ա 4	4000
4	Սնուցման բլոկի նորոգում պահեստամասերով	4000
	5. Համակարգչային ցանցի պահպահման և վերանորոգման տեխնիկական բնութագիր	
1	Սվիչի տեղադրում՝ ներառյալ սվիչ, 10/100/1000 16 պորտ Դ-Լինկ (D-LINK SWITCH 10/100/1000 16 PORT)	28000
2	Մալուխի անցկացում՝ ներառյալ մալուխը (գծամետր)	500
	6. LCD կամ LED հեռույստացույցի	
1	Սնուցման բլոկի նորոգում պահեստամասերով	12000
2	Վերածրագրավորում, անհրաժեշտության դեպքում ծրագրավորման միկրոսխեմայի փոխարինում	21000
3	LCD կամ LED լույսավորության փոխարինում պահեստամասերով	14000
	7. Լազերային տպիչի պահպահման և վերանորոգման տեխնիկական բնութագիր	
1	Լիցքավորում լազերային տպիչների՝ ներառյալ տոները, չիպը, թմբուկը, մաքրող դանակը,կարատրոնը,չափիչ դանակը, մագնիսական լիսեռը ՀՊ ԼՋ 1100, 1012, 1015, 1018, 1020, 3015, 3020, 3030, 3050, 3050z, 3052, 355 M1005mfp, Q2612A (Քենոն 303/703) HP 1320, Canon i-sensys LBP6300dn (Քենոն 719), 737, 278A, CB435A, 728, 325, քսերոքս 106R01487	3000
2	Լիցքավորում լազերային տպիչների' ներառյալ տոները, մաքրող դանակը,կարատրոնը, չափիչ դանակը, մագնիսական լիսեռը Pantum M6800FDN (TL-420)	4000
3	Լազերային տպիչների' քարթրիջի չիպի փոխարինում ներառյալ չիպը 6000 էջ տպաքանակի համար Pantum M6800FDN (TL-420)	6000
4	Լազերային տպիչների քարթրիջի փոխարինում ներառյալ քարթրիջը, 6000 էջ տպաքանակի համար՝ Pantum M6800FDN (TL-420)	28000
5	Լազերային տպիչների' քարթրիջի չիպի փոխարինում ներառյալ չիպը HP Laser MFP 135a (W1106A)	2000
6	Լազերային տպիչների քարթրիջի փոխարինում ներառյալ քարթրիջը, HP Laser MFP 135a (W1106A)	10000
7	Լազերային տպիչների՝ քարթրիջի փոխարինում ներառյալ քարթրիջը, HP 12A (Q2612A)	5000
8	Լազերային տպիչների՝ քարթրիջի փոխարինում ներառյալ քարթրիջը, Canon 737, 283	6000
9	Լազերային տպիչների՝ քարթրիջի փոխարինում ներառյալ քարթրիջը, HP CE278A/728	6000
10	Լազերային տպիչների՝ քարթրիջի փոխարինում ներառյալ քարթրիջը, HP CB435A	6000
11	Լազերային տպիչների՝ քարթրիջի փոխարինում ներառյալ քարթրիջը, Canon 728	6000
12	Լազերային տպիչների՝ քարթրիջի փոխարինում ներառյալ քարթրիջը, Canon 325	6000
13	Լազերային տպիչների' քարթրիջի չիպի փոխարինում ներառյալ չիպը 9000 էջ տպաքանակի համար Pantum M6800FDN (TL-420)	8500
14	Լազերային տպիչների' քարթրիջի թմբուկի փոխարինում' (Dum Unit DL- 420) ներառյալ թմբուկը' Dum Unit DL-420) 12 000 էջ տպաքանակի համար Pantum M6800FDN (DL-420)	35000
15	HP Color LJ M452 գունավոր լազերային տպիչի քարթրիջի լիցքավորում ներառյալ համապատասխան տոները, չիպը, թմբուկը, մաքրող դանակը,կարատրոնը,չափիչ դանակը, մագնիսական լիսեռը	10000
16	HP Color LJ Pro MFP M283fdw գունավոր լազերային տպիչի քարթրիջի լիցքավորում ներառյալ	23000

	համապատասխան տոները, չիպը, թմբուկը, մաքրող դանակը,կարատրոնը,չափիչ դանակը, մագնիսական լիսեռը	
17	HP LJ Pro 300 գույնավոր լազերային տպիչի քարթրիջի լիցքավորում ներառյալ համապատասխան տոները, չիպը, թմբուկը, մաքրող դանակը,կարատրոնը,չափիչ դանակը, մագնիսական լիսեռը	10000
18	Վառարանի թերմոթաղանթի փոխարինում՝ ներառյալ թերմոթաղանթ (HP/Canon/Xerox)	5000
19	Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում՝ ներառյալ թղթի տրման ռետինե լիսեռ (HP LJ, Canon LBP, Xerox 3120)	2500
20	Լազերային տպիչի պրոֆիլակտիկա	4000
21	Լազերային տպիչի վառարանի վերանորոգում՝ նեռարյալ պահեստամասերը	6000
22	Լազերային տպիչի լազերային բլոկի վերանորոգում՝ ներառյալ պահեստամասերը	4000
23	Լազերային տպիչի լազերային բլոկի փոխարինում՝ ներառյալ լազերային բլոկը	9000
24	Լազերային բազմաֆունկցիոնալ սարքի պրոֆիլակտիկա	5000
25	Լազերային բազմաֆունկցիոնալ սարքի վառարանի վերանորոգում՝ նեռարյալ պահեստամասերը	8000
26	Լազերային բազմաֆունկցիոնալ սարքի լազերային բլոկի վերանորոգում՝ ներառյալ պահեստամասերը	4000
27	Լազերային բազմաֆունկցիոնալ սարքի լազերային բլոկի փոխարինում՝ ներառյալ լազերային բլոկը	9000

**** Պայմանագիրը կնքվում է նախահաշվային գնով,***
**** քարտրիջների ծառայությունները կմատուցվեն ըստ պատվիրատուի պահանջի՝ կատարողին պահանջի ծագման մասին տեղակեցնելու պահից 1 օրվա ընթացքում,***
**** վերանորոգման և պահեստամասերի փոխարինման ծառայությունները պետք է մատուցվեն ըստ պատվիրատուի պահանջի՝ տեղակեցնելու պահից 3 օրվա ընթացքում:***
**** ծառայությունները պետք է մատուցվեն պատվիրատուի մոտ տեղում կամ սարքերը պետք է տեղափոխվեն նորոգման և նորոգվելուց հետո առաքվեն պատվիրատուին կատարողի կողմից և սահմանված ժամկետում,***
**** Ծառայության աշխատանքի անխափանության համար կատարողը պարտավորվում է միշտ թողնել տպիչների բոլոր տեսակներին համապատասխան լիցքավորված պահուստային քարտրիջներ***
**** պահեստամասերը պետք է լինեն նոր և գործարանային արտադրության***
**** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:***

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի Հանրապետության պետական
վերահսկողական ծառայություն
ք. Երևան, Մաշտոցի 47
Հայաստանի Հանրապետության ֆինանսների
նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900011021954
ՀՎՀՀ 00183253

Գլխավոր քարտուղար՝

---------- Ա. Բաղդասարյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

Ա/Ձ «Մանվել Ջալավյան»
Ք. Երևան, Նոր Նորք
Գալշոյան փ. 19 շ. բն. 12
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050032155921001
ՀՎՀՀ 82934656

Տնօրեն՝

---------- Մ. Ջալավյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
« 4 » ապրիլ 2023թ. կնքված
«ՊՎԾ-ՄԱԾՁԲ-23/08» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023թ-ին՝ ըստ եռամսյակների, այդ թվում*												
			Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	50311120/1	Համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ				200000	200000	200000	400000	400000	400000	600000	600000	600000	**600000**

***Վճարումը կկատարվի փաստացի մատուցված ծառայությունների համապատասխան՝ հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա:**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի Հանրապետության պետական
վերահսկողական ծառայություն
ք. Երևան, Մաշտոցի 47
Հայաստանի Հանրապետության ֆինանսների
նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900011021954
ՀՎՀՀ 00183253

Գլխավոր քարտուղար

---------- Ա. Բաղդասարյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

Ա/Ձ «Մանվել Ջալավյան»
Ք. Երևան, Նոր Նորք
Գալշոյան փ. 19 շ. բն. 12
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050032155921001
ՀՎՀՀ 82934656

Տնօրեն՝

---------- Մ. Ջալավյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 3
« 04 » ապրիլ 2023թ. կնքված
«ՊՎԾ-ՄԱԾՁԲ-23/08» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 2023թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ պետության կարիքների համար համակարգչային սարքերի պահպանման եվ վերանորոգման ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագիր

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 2023թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 2023 թ. դուրս գրված N _____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	Մատուցված ծառայությունների				Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը			
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն

Հավելված 3.1
« 04. » մայիսի 2023թ. կնքված
«ՊՎԾ-ՄԱԾՁԲ-23/08» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն